Հայաստանի Հանրապետություն
Արմավիրի մարզ
Արգավանդի համայնքապետարան

✉ գ. Արգավանդ
☎ /093.99-02-09/
«09» «07» 2019թ.
N 195

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ `Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մաթևոսյան՝

Ձեզ ենք ներկայացնում Արգավանդ համայնքի ավագանու 25.06.2019թ. հերթական նիստի որոշումները:
Առդիր՝ 8 թերթ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱՋԱՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ 6-ՐԴ ՆԻՍՏ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արգավանդ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արգավանդ, (093) 990209, argavand.armavir@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի

ԿԱՅԱՑԱՎ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԸ ԱՎԱԳԱՆՈՒ 4 ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՇԱՎԻՐ ԱՂԱՋԱՆՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՐՑԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԱՐԿԵՑ ՀԱՍՏԱՏԵԼ ՕՐԱԿԱՐԳԸ

Որոշում թիվ 39

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի 6-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արգավանդ համայնքի ավագանու 2019թ.Հունիսի 25-ի հերթական նիստի օրակարգը՝

1.1 Խմելու ջրի պոմպերի հորատանցքերի շուրջը ցանկապատերի կառուցում և հորատանցքերի շրջակայքի խճապատում, Աղվանի դռան խմելու ջրի հորատանցքի բարձրացում:

Զեկ. Ա.Աղաջանյան

1.2 Համայնքի բնակիչների դիմումների քնարկում:

Զեկ. Ա.Աղաջանյան

1.3 <<Հատուցում 2019>> ծրագրի շրջանակներում Ապրիլյան պատերազմի մասնակիցներին հանգստյան տուն ուղարկելու մասին:

Զեկ. Ա.Աղաջանյան

1.4 համայնքի հողի հաշվեկշռի հաստատում:

Զեկ. Ա.Աղաջանյան

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՂԱՄԲԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԹՈՎՄԱՍՅԱՆ ԿԱՄՈ

ՈՍԿԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇՄԱՎՈՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՇԱՎԻՐ ԱՂԱՋԱՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արգավանդ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արգավանդ, (093) 990209, argavand.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 40

## ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՊՈՄՊԵՐԻ ՀՈՐԱՏԱՆՑՔԵՐԻ ՇՈՒՐՋԸ ՑԱՆԿԱՊԱՏԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԽՃԱՊԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավար Ա. Աղաջանյանը ներկայացնելով հարցը առաջարկեց, որ խմելու ջրի պոմպերի շրջակայքը պետք է ցանկապատել և տարածքը խճապատել, որպեսզի զերծ մնա աղբից և այլ առարկաներից,իսկ Աղվանի տան մոտ գտնվող խմելու ջրի հորատանցքը բարձրացնել հողի մակերեսից:
Ավագանին քննարկելով հարցը տվեց իր հավանությունը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 14-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Համայնքի խմելու ջրի պոմպերի հորատանցքերի շուրջը ցանկապատի կառուցման,խճապատման և Աղվանի տան մոտ գտնվող հորատանցքի բարձրացման համար հատկացնել 420000/ չորս հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՂԱՄԲԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԹՈՎՄԱՍՅԱՆ ԿԱՄՈ

ՈՍԿԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇՄԱՎՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՇԱՎԻՐ ԱՂԱՋԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արգավանդ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արգավանդ, (093) 990209, argavand.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 41

### ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Համայնքապետարան են դիմել բնակիչներ Սիրվարդ Գրիգորյանը, Լաուրա Բեգլարյանը և Արտակ Դանիելյանը:Սիրվարդ Գրիգորյանը խնդրում է դրամական օգնություն, քանի որ նա գլխուղեղի կատված է ստացել և բուժման համար անհրաժեշտ է համապատասխան միջոցներ:Լաուրա Բեգլարյանը ընտանիքը բազմանդամ է, ունի 5 թոռնիկներ, որոնցից վերջինը եռյակներ և գտնվում է սոցիալապես ծանր վիճակում, նրա խնդրանք է եզրակացություն տալ սոցիալական վիճակի մասին:Արտակ Դանիելյանը դիմել է, որ ունի Նիսան մակնիշի ավտոմեքենա, որը 2016թ. չի շահագործել անսարքության պատճառով, խնդրում է ազատել գույքահարկի տուգանքներից, որը կազմում է 60000/ վաթսուն հազար/ ՀՀ դրամ:Ավագանու անդամները քննարկելով դիմումները տվեցին իրենց համաձայնությունը և քվյարկեցին բոլորը կողմ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1 կետի 2-րդ ենթակետով, «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություններ սահմանված կարգով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Համայնքի բնակչուհի Սիրվարդ Գրիգորյանին հատկացնել 40000/ քառասուն հազար/ ՀՀ դրամ օգնություն:

2. Լաուրա Բեգլարյանի ընտանիքը համարել սոցիալապես անապահով և ներկայացնել համապատասխան սոցիալական ապահովության կենտրոն:

3.Արտակ Դանիելյանին ազատել մեքենայի գույքահարկից գոյացած տույժ տուգանքներից:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -1

ՂԱՄԲԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԹՈՎՄԱՍՅԱՆ ԿԱՄՈ

ՈՍԿԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇՄԱՎՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՇԱՎԻՐ ԱՂԱՋԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արգավանդ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արգավանդ, (093) 990209, argavand.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 42

ՔԱՌՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ՀԱՆԳՍՏՅԱՆ ՈՒՂԵԳՐԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1 –ին մասի 4-րդ կետով, և հիմք ընդունելով «Հատուցում 2019» բարեգործական հիմնադրամի գրությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Ապրիլյան պատերազմի մասնակիցներին տրամադրել հանգստյան ուղեգրեր՝ «Հատուցում 2019» բարեգործական հիմնադրամի 50 % ֆինանսավորմամբ և համայնքապետարանի 50 % ֆինանսավորմամբ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՂԱՄԲԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԹՈՎՄԱՍՅԱՆ ԿԱՄՈ

ՈՍԿԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇՄԱՎՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՇԱՎԻՐ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Հավելված

Ավագանու թիվ 42 որոշման

Ցուցակ

1. Ստեփանյան Նարեկացի Արշակի
2. Իսկանդարյան Գեղամ Վահրամի
3. Ավետիսյան Արմենակ Հովհաննեսի
4. Ալեքսանյան Արմեն Սամվելի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արգավանդ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արգավանդ, (093) 990209, argavand.armavir@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 43

ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով մարզպետի գրությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Արգավանդ համայնքի հողային հաշվեկշիռը համաձայն ձև 22-ի և 22ա-ի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՂԱՄԲԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԹՈՎՄԱՍՅԱՆ ԿԱՄՈ

ՈՍԿԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇՄԱՎՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՇԱՎԻՐ ԱՂԱՋԱՆՅԱՆ